

**Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն**

«ԱՍԷԴԼ» սահմանափակ պատասխանատվության ընկերություն

31 դեկտեմբերի 2023թ.

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԱՍԷԴԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են «ԱՍԷԴԼ» ՍՊԸ-ի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

1. Մենք հնարավորություն չենք ունեցել մասնակցելու Ընկերության պաշարների տարեվերջի գույքագրմանը, որոնք ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,767,419 հազար դրամի չափով: Ելնելով Ընկերության պաշարների բնույթից և քանակից, ինչպես նաև համապատասխան տեղեկատվության բացակայությունից՝ մենք հնարավորություն չենք ունեցել այլ աուդիտորական ընթացակարգերի կիրառման միջոցով ձեռք բերել բավարար ապացույցներ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների առկայության վերաբերյալ:

Քանի որ պաշարների մնացորդները ներառվում են ֆինանսական արդյունքներում և դրամական հոսքերում, մենք չենք կարողացել որոշել 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացված տարվա արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների ճշգրտման անհրաժեշտությունը:

2. Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «Պաշարներ» հոդվածի ինքնարժեքի չափման, ձևավորման հաշվառումը իրականացվել է ոչ լիարժեք: Մենք ի վիճակի չենք եղել կարծիքի հիմնավորման համար ձեռք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ նշված հոդվածի մնացորդի և համապատասխանաբար իրացված արտադրանքի ինքնարժեքի վերաբերյալ, սակայն եզրակացնում ենք, որ խեղաթյուրումների, եթե այսպիսիք կան, հնարավոր ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա կարող է լինել էական, սակայն ոչ համատարած:

3. Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում «Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր» հոդվածի՝ մասնավորապես տրված կանխավճարների մասով, մեզ չհաջողվեց ձեռք բերել արտաքին հավաստումներ, մինևույն ժամանակ չէինք կարող իրականացնել այլընտրանքային ընթացակարգեր դրանց հաստատման նպատակով: Մենք չենք կարողացել որոշել վերը նշված հարցի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա: Հետևաբար, մենք չենք կարողացել պարզել, թե արդյոք եղել է ֆինանսական հաշվետվությունների ճշգրտման անհրաժեշտություն:

Մենք առդիտն անցկացրել ենք առդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Առդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների առդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԽ կանոնագրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր առդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված առդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է ղեկավարի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեկավարը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեկավարի ճշմարիտ ներկայացումը:



Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«ԷՖ ԷՍ ՓԻ Ըդվայս» ՍՊԸ,

Ռուզաննա Բադալյան

Բաժնետեր-տնօրեն/
առաջադրանքի պատասխանատու

28 հունիսի 2024թ.

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն



Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	4,104,146	3,508,624
Ոչ նյութական ակտիվներ		5,019	949
Հետաձգված հարկային ակտիվներ	5	5,171	3,968
		<u>4,114,336</u>	<u>3,513,541</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	6	1,767,419	2,079,409
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	2,078,976	1,807,528
Տրված փոխառություններ		80,000	9,661
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	8	649,958	497,847
		<u>4,576,353</u>	<u>4,394,445</u>
Ընդամենը ակտիվներ		<u>8,690,689</u>	<u>7,907,986</u>

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Ծանոթ.			
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
<i>Կապիտալ և պահուստներ</i>	9			
Կանոնադրական կապիտալ		559,480	502,350	
Կուտակված շահույթ		926,631	1,071,358	
		1,486,111	1,573,708	
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>				
Վարկեր և փոխառություններ	10	29,332	157,795	
		29,332	157,795	
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>				
Վարկեր և փոխառություններ	10	4,729,123	3,931,817	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	2,300,991	2,162,596	
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		145,132	82,070	
		7,175,246	6,176,483	
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		8,690,689	7,907,986	

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. հունիսի 28-ին:

Էդուարդ Ազիկյան
Տնօրեն

Աշոտ Ենգիբարյան
Ֆինանսական տնօրեն





Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

		2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հազար դրամ	Ծանոթ.		
Հասույթ	12	8,352,387	7,266,833
Վաճառքի ինքնարժեք	13	(6,749,276)	(6,184,697)
Համախառն շահույթ		1,603,111	1,082,136
Այլ եկամուտ		64,912	9,203
Իրացման ծախսեր	14	(147,782)	(125,667)
Վարչական ծախսեր	15	(243,753)	(266,498)
Այլ ծախսեր		(29,214)	(49,732)
Գործառնական գործունեությունից շահույթ		1,247,274	649,443
Ֆինանսական ծախսեր		(11,351)	(13,830)
Ֆինանսական եկամուտ		3,074	-
Այլ ֆինանսական արդյունքներ	16	(6,938)	162,576
Շահույթ մինչև հարկերը		1,232,059	798,189
Շահութահարկի գծով ծախս	17	(228,689)	(117,307)
Տարվա շահույթ		1,003,370	680,882
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		1,003,370	680,882

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնա- դրական կապիտալ	Կուտակ- ված շահույթ	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	502,350	390,476	892,826
Տարվա շահույթ	-	680,882	680,882
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	502,350	680,882	1,183,232
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	502,350	1,071,358	1,573,708
Կանոնադրական կապիտալի համալրում	57,130	-	57,130
Նախորդ ժամանակահատվածի ուղղում	-	(5,546)	(5,546)
Շահաբաժնի հայտարարագրում		(1,142,551)	(1,142,551)
Տարվա շահույթ	-	1,003,370	1,003,370
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	1,003,370	1,003,370
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	559,480	926,631	1,486,111

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ <i>Ճշգրտումներ</i>	1,003,370	680,882
Մաշվածություն և ամորտիզացիա	333,641	292,437
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	-	(2,094)
Տոկոսային ծախս	11,351	13,830
Շահութահարկի գծով ծախս	228,689	117,307
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստի շարժ	-	8,723
Այլ ֆինանսական արդյունքներ	(8,885)	(162,577)
<i>Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>	1,568,166	948,508
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(302,058)	(949,039)
Պաշարների փոփոխություն	311,990	707,487
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	149,938	3,745
<i>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</i>	1,728,036	710,701

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վճարված տոկոսներ	(11,351)	(13,830)
Վճարված շահութահարկ	(229,892)	154,853
<i>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<u>1,486,793</u>	<u>851,724</u>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(945,152)	(566,864)
Ստացված տոկոսային եկամուտ	3,074	-
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<u>(942,078)</u>	<u>(566,864)</u>
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահաբաժինների հայտարարագրում	(1,142,551)	-
Վարկերի և փոխառությունների ստացում/(մարում), զուտ	756,885	493,988
<i>Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ</i>	<u>(385,666)</u>	<u>493,988</u>
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	159,049	275,333
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(6,938)	(3,060)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	497,847	225,574
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	<u>649,958</u>	<u>497,847</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 39-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: